

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 5(18/19)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 30.01.2019թ.կայացած նիստի

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 21-ը :

Օրակարգ`

1. Ֆակուլտետի գիտ.խորհրդի 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատումը:
Ձեկ.՝ Մ.Ալեքսանյան
2. Հաղորդում ֆակուլտետի մագիստրոսական ավարտական թեզերի կատարման ընթացքի մասին:
Ձեկ.՝ ամբիոնների վարիչներ
3. “Ռադիոտեխնիկա և կապ” մասնագիտության բակալավրիատի ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու հարցը:
Ձեկ.՝ Հ. Հարոյան
4. Ֆակուլտետի ՌԻՄ նախագահի հաղորդումը ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:
5. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ.

Լսեցին- Ֆակուլտետի գիտ.խորհրդի 2018-2019 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը: Ֆակուլտետի գիտ.խորհրդի քարտուղար Մ.Ս. Ալեքսանյանը նշեց, որ ընթացիկ կիսամյակում նախատեսվում է ունենալ գիտ.խորհրդի 4 նիստեր:

Արտատայտվեցին.- Տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցեցին ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը և Ռ.Մ. Ավագյանը:

Որոշեցին.- Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին - ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ամբիոնների վարիչների զեկուցումը մագիստրոսական ավարտական թեզերի կատարման ընթացքի մասին: Նշվեց, որ ամբիոններում մագիստրոսական ավարտական թեզերը նորմալ վիճակում են, իսկ դեկավարների հետ աշխատանքներն ակտիվ փուլում են:

Որոշեցին.- հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին- “Ռադիոտեխնիկա և կապ” մասնագիտության ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու հարցը:

Արտահայտվեցին- «Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման» ամբիոնի վարիչ Հ.Ս. Հարոյանը նշեց, որ հաշվի առնելով տվյալ ոլորտի դինամիկ զարգացումը և ՀՀ-ում աշխատաշուկայի պահանջները, հիմք ընդունելով նաև արտասահմանյան առաջատար բուհերի ծրագրերը, անհրաժեշտություն է առաջացել ծրագրում կատարել որոշ փոփոխություններ: Առաջարկվող փոփոխություններին դրականապես արտահայտվեցին նաև ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ. Ներկարարյանը, Ա.Ա. Հախումյանը: Նշվեց, որ առաջարկվող փոփոխությունները հանգամանալից քննարկվել են նաև ֆակուլտետի մեթոդական խորհրդում:

Որոշեցին- Հավանություն տալ “Ռադիոտեխնիկա և կապ” մասնագիտության ուսումնական պլանում առաջարկվող փոփոխություններին:

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին- ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Բ.Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց 2018/2019 ուս.տարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքները, ինչպես նաև խոսեց մինչև ուսումնական տարվա ավարտը նախատեսված միջոցառումների մասին:

Արտահայտվեցին- Ելույթ ունեցան ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը և Յու.Հ. Ավետիսյանը՝ հորդորելով ուսանողներին լինել ավելի ակտիվ, և՛ ուսումնական պրոցեսում, և՛ կարգապահական հարցերում:

Որոշեցին- ուսանողական խորհրդի նախագահ Բ.Ա. Հովհաննիսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգը սպառված է:

**Խորհրդի նախագահ,
Ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր**

ԽՎ.Ներկարարյան

**Գիտքարտուղար,
Ֆ.մ.գ.թ.**

Մ.Ս. Ալեքսանյան